Ալեքսանդր Ծատուրյան

Բարի՛ հրեշտակ

Մարդկանց մեջ մենա՞կ, խե՞ղճ, անմխիթա՞ր,
Ես լալիս էի, իմ օրն էր խավար,
Երբ դու փայլեցիր իմ աղոտ կյանքում,
Որպես մի աստղիկ մթին երկնքում:

Եվ մտերմական մի ջերմ համբույրով
Դու վիշտս դարձրիր ուրախության ծով.
Քո սերը որպես գարնան արշալույս,
Իմ սրտում վառեց նոր կյանք ու նոր հույս:

Եվ քանի՛ հույզեր, քանի՛ անուրջներ՝
Վաղաժամ թաղված, վաղաժամ ավեր,
Բուռն եռանդով նորից կյանք առան
Եվ ողջունեցին քո մտերմության:

Մենակ չեմ էլ ես… Քո սերն է, մանուկ.
Այժմ կյանքի մեջ ինձ ուժ ու նեցուկ.
Քո սերն է երգչիս ընկերը միակ,
Ա՛խ, օրհնյալ լինիս, իմ բարի՛ հրեշտակ: